ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«19» 05 2022թ. N 20/659

«ԴԸ ԲԵՍԹ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ

Հ. Վարդանյանին

ք. Վեդի, Թումանյան 6, 1-ին հարկ

Էլ. հասցե՝ gnumner2020@mail.ru

ՀՎՀՀ 04236086

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «ԴԸ ԲԵՍԹ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 27.12.2021թ. կնքված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/1-ՏՆՏ1-4 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 18.02.2022թ. կնքված N 1 (11/180-2022) և 31.03.2022թ. կնքված N 2 (11/302-2022) համաձայնագրերի (այսուհետ՝ Համաձայնագրերի)՝ 2022թ. ընթացքում, Վաճառողը պարտավորվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար մինչև 30.04.2022թ. մատակարարել Պայմանագրի N 2 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցով նախատեսված ներքոհիշյալ աղյուսակում նշված ապրանքները.

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը, սակայն **չմատակարարված**	ժամկետը**
9	հատ	720.00	36000.00	50	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	50	30 ապրիլի 2022թ.
18	հատ	1861.99	186199.00	100	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	100	30 ապրիլի 2022թ.
19	հատ	1800.00	180000.00	100	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	100	30 ապրիլի 2022թ.

68	մետր	403.80	80760.00	200	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	200	30 ապրիլի 2022թ.
69	մետր	606.00	121200.00	200	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	200	30 ապրիլի 2022թ.
78	մետր	2564.00	769200.00	300	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	300	30 ապրիլի 2022թ.
79	մետր	71.20	106800.00	1500	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	1500	30 ապրիլի 2022թ.
80	մետր	95.04	142560.00	1500	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	1500	30 ապրիլի 2022թ.
90	հատ	9000.00	90000.00	10	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	10	30 ապրիլի 2022թ.
100	հատ	9360.00	468000.00	50	ք. Երևան, Այվազովսկու նրբ. 5	50	30 ապրիլի 2022թ.

29.04.2022թ. N 41 գրությամբ Վաճառողը տեղեկացրել է, իբրև թե, ֆորս-մաժորային իրավիճակով պայմանավորված ապրանքների մատակարարման անհնարինության մասին, հստակ չնշելով պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարումից հրաժարվելու հանգամանքը և մինչ օրս Վաճառողը չի մատակարարել ապրանքները:

Համաձայն Պայմանագրի 2.1.7.-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում համաձայն Պայմանագրի 2.1.7.1.-րդ կետի «բ» ենթակետի Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7. կետը և Պայմանագրի 8.11. կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեակացնում ենք, որ «ԴԸ ԲԵՍԹ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, համաձայն Պայմանագրի 6.2 կետի, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 13084.3 (տասներեք հազար ութսունչորս դրամ և 3 լումա) ՀՀ դրամ, որպես տույժ, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական հաշվեհամարին 900005000758 ենթակա են գանձման համապատասխանաբար 327107.8 (երեք հարյուր քսանյոթ հազար մեկ հարյուր յոթ դրամ և 8 լումա) ՀՀ դրամ գումար որպես տուժանք՝ որակավորման ապահովում և 218071.9 (երկու հարյուր տասնութ հազար յոթանասունմեկ դրամ և 9 լումա) ՀՀ դրամ գումար, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում:

Ա. Հակոբյան